



Ինչ հասցրեց անել Բնապահպանության Նախարարությունը անցած մեկ տարում

Արդյունքներն ամփոփում է նախարարը

ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը զանգվածային լրատվության միջոցների հետ հանդիպման ժամանակ ամփոփել է իր ղեկավարած գերատեսչության վերջին մեկ տարվա աշխատանքների արդյունքները: Հիշեցնելով, որ իր պաշտոնավարման 100 օրն ամփոփելիս ներկայացվել էր ոլորտի խնդիրների փաստաթուղթը, որպես շրջակա միջավայրի պատասխանատու գերատեսչություն, դրանց լուծման տեսլականը՝ նա նշել է, որ ոլորտում կոռուպցիոն բարձր ռիսկերի նվազեցման, բնական ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման միասնական քաղաքականության մշակման ուղղությամբ միջոցառումների մի մասն իրականացվել է, մյուսները ընթացքի մեջ են: Երեք հիմնական՝ մասնագիտական բարձր որակների, հայրենասիրության, պատասխանատվության սկզբունքների վրա հիմնված կադրային քաղաքականությունը և կառուցվածքային բարեփոխումների ծրագրերը լիարժեք

իրականացվում են: «Մեծ տեղ ենք հատկացրել միջազգային կազմակերպությունների հետ աշխատանքին, ինչը պետք է արտացոլվեր դրամաշնորհների տեսքով՝ երկիր գումարների մուտքի գործընթացում: Այս առումով մեր նախանշած ցուցանիշն ապահովվել է: Շուրջ 30,7 մլն ԱՄՆ դոլարի համարժեք դրամաշնորհային ծրագրեր մենք արդեն կնքել ենք, ինչն ուղղվելու է շրջակա միջավայրի բարելավմանը և համակարգի զարգացմանը: Դրամաշնորհային միջոցների թափանցիկությունը բարձրացնելու, պետական բյուջեի գանձապետական համակարգի միջոցներին համահունչ հրապարակայնություն ապահովելու՝ ՀՀ Նախագահի հանձնարարականի կատարման համատեքստում, արդեն մեծաքանակ դրամաշնորհային միջոցներ ներառվել են պետական բյուջե և բաշխվում են այնտեղից:

• Ինչ հասցրեց անել Բնապահպանության նախարարությունը անցած մեկ տարում

Սկիզբը՝ էջ 11

Դրամաշնորհային բոլոր ծրագրերով հրապարակվում են ֆինանսական հաշվետվություններ»,- նշել է Ա. Մինասյանը: Նախարարը գերատեսչության կարևոր ձեռքբերում է համարել հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների և բնապահպանական խնդիրներով մտահոգ քաղաքացիների հետ համակգործակցության սերտացումն ու ընդլայնումը՝ հատկապես ոլորտում որոշումների կայացման գործընթացում, ինչը թույլ է տալիս համակարգն առավել առաջանցիկ զարգացման տեմպերի վրա տեղափոխել: «ՀՀ բնապահպանության նախարարությունը որդեգրել և առաջնորդվում է այն սկզբունքով, որ հանրությունը պետք է ոչ միայն տեղյակ լինի ոլորտին վերաբերող որոշումներին, այլ մասնակցի դրանց ընդունման գործընթացին»: Նախարարն ընդգծել է հանրության կողմից ոլորտի նկատմամբ հետաքրքրության բարձրացման փաստը, ինչն արտահայտվում է մասնավոր նախաձեռնությունների թվի աճով, որոնք ուղղված են բնության հատուկ պահպանվող տարածքների բարելավմանը կամ նոր տարածքների ստեղծմանը և որոնց մասին առաջիկայում կտեղեկացվի հանրությանը: Առաջիկայում կհրապարակվեն թե՛ կազմակերպության, թե՛ անձի անունը, ով իր ֆինանսական միջոցներով պատրաստ է ձևավորել բնության հատուկ պահպանվող տարածք, որտեղ բացառվելու է որսը, ի տարբերություն որսահանդակների, ինչը խոսում է հասարակության մոտ էկոմշակույթի ձևավորման մասին: Ընդերքի քաղաքականության մասով հիմնարար վերափոխումներ են իրականացվում 3 ուղղություններով՝ ընդերքի շահագործման, մոնիթորինգի և դրանից հետո վերականգնողական աշխատանքների: Այս նպատակով ստեղծվել է շուրջ 15 նորմատիվ իրավական ակտ, ինչն ապահովելու է առաջիկայում մեծածավալ դրական փոփոխություններ: Անդրադառնալով կառուցվածքային բարեփոխումներին՝ Արծվիկ Մինասյանը տեղեկացրել է, որ ձևավորվել են միասնական մոնիթորինգ իրականացնող պետական կազմակերպությունը ու Բնապահպանական և ընդերքի տեսչական մարմինը: Վերջինիս վերահսկողական լիազորություններն ուժեղացված են և այն դուրս է բերված Բնապահպանության նախարարության ենթակայությունից: «Սա թույլ է տալիս նախարարությանը կենտրոնանալու բնական ռեսուրսների հաշվառման, պլանավորման, մոնիթորինգի, հսկողության, վերականգնման և էկոկրթության գործառնությունների վրա, ինչը շատ կարևոր է և կնպաստի շրջակա միջավայրի պահպանության հարցերում լիազոր մարմնի դերի և հեղինակության մեծացմանը»,- շեշտել է Արծվիկ Մինասյանը: Նախարարը պատասխանել է լրագրողների երկու տասնյակից ավել հարցերին: Անդրադառնալով գլոբալ փոփոխություններով պայմանավորված հրդեհների կանխարգելման և դրանց դեմ պայքարի վերաբերյալ հարցերին՝ Ա. Մինասյանը նշել է, որ կլիմայի փոփոխություններով պայմանավորված գործընթացի շրջանակներում գերատեսչությունը շատ ակտիվ համագործակցության մեջ է պետությունների և միջազգային կազմակերպությունների

հետ: Ինչի շրջանակներում հաստատվել է ազգային հարմարվողականության ծրագիրը, ըստ որի, գլոբալ փոփոխության պայմաններում Հայաստանը պետք է ունենա հարմարվողականության մեխանիզմներ և մեղմման գործողություններ /կանաչապատ տարածքների ընդլայնում, ածխածնի երկօքսիդի արտանետումների նվազեցում, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում/: Այդ նպատակով կնեղարվեն դրամաշնորհային միջոցներ, ինչպիսիք օրինակ այս տարի մեկնարկած 20 մլն ԱՄՆ դոլարի էներգախնայողության դրամաշնորհային ծրագիրն է, որի հաջող իրականացմանը կհաջորդի նույն նպատակներով ցածր տոկոսով վարկային զգալի միջոցների ներգրավումը: Այս շրջանակներում բնապահպանության նախարարը կարևորել է հրդեհների կանխարգելման և արագ արձագանքման համակարգերի ձևավորումը: Սակայն առանձնացրել է նաև հրդեհների ծագման ոչ կլիմայական, այլ մարդածին պատճառների գործոնը: Որպես օրինակ՝ հիշատակել է «Նոստրոլի անտառ» պետական արգելոցում հրդեհի երկրորդ օրն արբանյակից արված լուսանկարը, /որը տրամադրել էր ԱՄՆ կառավարությունը/, որտեղից երևում է, որ հրդեհի մի քանի օջախներ կան, որոնք միմյանցից գտնվում էին մեծ հեռավորության վրա, ինչը հնարավոր է միայն կայծակի դեպքում, որն այդ օրերին բացառվում էր: Նախարարը հայտնել է, որ այդ լուսանկարները փոխանցվել են իրավապահ մարմիններին՝ հրդեհի պատճառների լիարժեք քննություն անցկացնելու համար: Պատասխանելով «Դիլիջան» ազգային պարկի տարածքում ապօրինի ծառահատումների դեմ խստացված միջոցառումների դեմ Հաղարծին գյուղում կազմակերպված բողոքի ակցիաներին վերաբերող հարցին՝ Արծվիկ Մինասյանը ներկաների ուշադրություն է հրավիրել մի երևույթի վրա, երբ մի կողմից նախարարությունից պահանջում էին խստացնել ապօրինի ծառահատումների դեմ պայքարը և երբ այդ ուղղությամբ նախարարությունն իրականացնում է առարկայական միջոցառումներ, հնչում են հակառակ պնդումները, որոնք սփռվում են նաև մամուլով, թե գյուղացուն զրկում են ապրուստի միջոցից: Նախարարը շեշտել է, որ որևէ գյուղացի, ով հոգում է իր տան վառելիքայտի հարցը՝ խնդիր չի ունեցել, քանի որ նաև ՀՀ կառավարության որոշմամբ նրանց անվճար հատկացումներ են արվում: Խստացման միջոցառումներն ուղղված են այն անձանց դեմ, ովքեր էլ քաղաքացիներին կազմակերպված դուրս են բերում փողոց՝ փորձելով իրենց անօրինական բիզնես շահը ներկայացնել գյուղացիների ապրելու բնական իրավունքի իրացում: «Սոցիալական խնդիրներ ունեն բոլոր մարզերի բնակիչները և չի կարելի ապօրինի ծառահատումները հիմնավորել դրանով: Սոցիալական լարվածությունը նվազեցնելու նպատակով միջազգային կազմակերպությունների և դոնորների հետ բանակցություններ են տարվում այդ համայնքներում կողմնակի անտառօգտագործմանը նպաստող ծրագրեր իրականացնելու համար»,- ամփոփել է Բնապահպանության նախարարը:

Ճանկացած նախաձեռնությունն մեզ համար ընդունելի կլինի միայն բնապահպանական նորմերը անվերապահ պահպանելու դեպքում



Նախարար Արծվիկ Մինասյանը օրերս հանդիպել է «Ազապե» ՍՊԸ-ի հիմնադիր և գործադիր տնօրեն Գրեմ Ջոնսոնին և ֆինանսական տնօրեն Քրիստինե Վարդանյանին՝ վերջիններիս խնդրանքով: Գրեմ Ջոնսոնը տեղեկացնել է, որ ընկերությունը հետաքրքրված է Հայաստանի տարածքում նավթի և գազի արդյունահանման հեռանկարով և ներկայացրել ընկերության առաջիկա նկատառումները: Ընկերությունը նախատեսել էր ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերում իրականացնել նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրություն՝ սեյսմավիբրատորների օգնությամբ և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ է ներկայացվել համապատասխան հայտեր:

ՀՀ Սյունիքի մարզում ուսումնասիրություն իրականացնելու հայտը մերժվել է փաստաթղթերի ոչ լիարժեք լինելու պատճառով, իսկ ՀՀ 5-րդ պայմանական տարածքի (ՀՀ Վայոց ձոր) նախնական գնահատման հայտի վերաբերյալ նշանակվել է հանրային քննարկում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում, հոկտեմբերի 5-ին ժամը 12:00-ին: Հետախուզական աշխատանքների արդյունքում, եթե հաստատվեն նավթի և գազի արդյունաբերական ծավալները, ընկերությունն օրենքով սահմանված կարգով կդիմի բնապահպանական փորձաքննության՝ արդյունահանում իրականացնելու նպատակով: Բնապահպանության նախարարը հետաքրքրվել է այս փուլում՝ երկրաբանական ուսումնասիրության գործընթացում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության հավանականության մասին: «Ազապե» ՍՊԸ-ի տնօրենը տեղեկացրել է, որ սեյսմահետախուզությամբ ձայնային ալիքներ է ու-



ղարկվում (օգտագործելով տատանում առաջացնող սարքեր, ինչպիսիք են սեյսմավիբրատորները) երկրի ընդերք, որտեղ երկրակեղևում գտնվող տարբեր շերտերն անդրադարձում են այդ ալիքները: Անդրադարձած ալիքները նախապես որոշված ժամանակահատվածում գրանցվում են հատուկ սեյսմաընդունիչների (գեոֆոնների) միջոցով՝ հնարավոր ածխաջրածինների պաշարները որոշելու նպատակով: Հետախուզման համար նախատեսված 4 սեյսմավիբրատորներից 16.5 մետր հեռավորության վրա ձայնային ալիքների ազդեցությունը կարելի է համեմատել մարդու վազքի ազդեցության ուժի հետ, ինչն աննշան ներգործություն կունենա շրջակա միջավայրի վրա: «ԱԳՄԵ» ընկերությունը այս փուլում կարող է իրականացնել հեռանկարային տարածքների միայն մակերևութային երկրաքիմիական քարտեզագրման ուսումնասիրություններ: Նկատելով, որ յուրաքանչյուր պետության համար կարևոր է սեփական նավթի և գազի պաշարների առկայությունը՝ Արծվիկ Մինասյանը, որպես բնապահպանության ոլորտում լիազոր գերատեսչության ղեկավար, առաջնային է համարել ցանկացած նախաձեռնություն իրականացնելիս բնապահպանական նորմերին անվերապահ հետևելը և շեշտել շրջակա միջավայրի վրա ազդեցության մասնագիտական գնահատման անհրաժեշտությունը:



Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը ժամանակավորապես կօգտագործի երկու գերատեսչությունների կայքէջերը

Սեպտեմբերի 26-ին տեղի է ունեցել ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստը: Առաջարկվել է հասարակության հետ կապն առավել արդյունավետ դարձնելու, քաղաքացիներից տարաբնույթ տեղեկատվություն և

առաջարկություններ ստանալու, նրանց մտահոգություններին, պահանջներին ու բողոքներին արագ արձագանքելու և ընթացք տալու նպատակով, ժամանակավորապես օգտագործել ՀՀ բնապահպանության նախարարության (+374-11-818559, <http://www.mnr.am/>), ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (+374-11-528243, <http://www.minenergy.am/>) թե՛ գծերի հեռախոսահամարները և պաշտոնական կայքէջերը, ինչին խորհրդի անդամները չառարկեցին: Նիստի արդյունքում հաստատվել է ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2018 թվականի բյուջետային հայտը, ինչպես նաև ընդունվել է ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի «Բողոքների ընդունման և հետագա ընթացք տալու կարգն ընդունելու մասին» որոշումը:

Սեպտեմբերի 30-ին, արձագանքելով նույն օրը մամուլում հրապարակված «Մասիսի գարշահոտությունը Նաիրիտի հրդեհի հետևանք» վերտառությամբ նյութում տեղ գտած ահազանգին, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանի հանձնարարությամբ՝ ԱԻՆ մասնագետներից կազմված օպերատիվ խումբը՝ Մասիսի քաղաքայետ Դ. Համբարձումյանի, Երևանի քաղաքապետարանի և ՀՀ բնապահպանության, առողջապահության, գյուղատնտեսության նախարարությունների, Արարատի մարզային կառույցների համապատասխան փորձագետների հետ իրականացրել է ուսումնասիրություն:

Աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել են Երևան քաղաքի Շենգավիթ վարչական տարածքի և Մասիս քաղաքի հարակից տարածքների կոյուղաջրերի հեռացման համակարգերը: Դիտարկման պահին գարշահոտությունը հասել էր նվազագույնի: Տեղի բնակիչների խոսքերով՝ վերջին երկու օրվա ընթացքում հոտն անհամեմատ նվազել էր: Նախորդ օրերի ընթացքում ՀՀ բնապահպանության նախարարության փորձագետների կողմից տեխնիկական կոյուղուց վերցված հեղուկի լաբորատոր փորձաքննության արդյունքում պարզվել է, որ հեղուկում առկա մի շարք նյութեր զգալիորեն գերազանցել են թույլատրելի չափաքանակները. ինչը վկայում է, որ գարշահոտն արտադրական գծունեության արդյունք է:

Միջգերատեսչական հանձնաժողովը արագ արձագանքեց Մասիսի գարշահոտության վերաբերյալ ահազանգին եւ տվեց իր ճշտագրիտ եզրակացությունը

Փորձաքննություն անցած հեղուկի մեջ հայտնաբերված միացությունների բաղադրությունը բացառում է այն այնպիսի, որ դրանում առկա են «Նաիրիտ» գործարանում առաջացած հրդեհի արգասիքներ: Մասիս քաղաքում առաջացած խնդրի վերացման աշխատանքները համակարգում է ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովը, որի անդամներն են ՀՀ Արտակարգ իրավիճակների, Բնապահպանության, Առողջապահության, Գյուղատնտեսության նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի և Արարատի մարզային կառույցների համապատասխան փորձագետները: Հանձնաժողովը գլխավորում է ՀՀ ԱԻՆ Փրկարար ծառայության տնօրենի տեղակալ Վրեժ Գաբրիելյանը: Մասիս քաղաքում տարածված գարշահոտության վերացման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունքների վերաբերյալ պարբերաբար կտրվի լրացուցիչ տեղեկատվություն:

Լավ լուծումներ Նաիրիտում առկա քիմիական նյութերի ոչնչացման կամ տնօրինման համար



Վարչապետի ՀՀ վարչապետի հանձնարարականի կատարման գործընթացի շրջանակներում ՀՀ բնապահպանության նախարարությունում հրավիրվել է աշխատաքային քննարկում, որը վարել է նախարարի առաջին տեղակալ Էրիկ Գրիգորյանը: Քննարկվել է Նաիրիտ գործարանն ՓԲ ընկերության տարածքում առկա քիմիական որոշ նյութեր նուսրացնելու և կոյուղու միջոցով հեռացնելու հնարավորությունները: Քննարկմանը մասնակցել են ՀՀ բնապահպանության, արտակարգ իրավիճակների, առողջապահության, էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, տարածքային կառավարման և զարգացման նախարարությունների համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներ, գիտական և մասնագիտական հաստատու-

թյունների մասնագետներ: Նյութերի գերակշիռ մասը կվաճառվեն այլ ընկերություններին կամ շրջակա միջավայրի համար անվնաս տարբերակով կայրվեն համապատասխան վառարաններում:

Նուսրացման և կոյուղու միջոցով հեռացման ենթակա է 8 քիմիական նյութ: Վերջիններիս մի մասը նույնպես պահանջարկ ունի շուկայում: Մնացած քիմիական նյութերի մասով ծավալված քննարկման արդյունքում առաջարկվել է ընկերությունում առկա աղաջրերից մի մասից աղ ստանալ և առաջարկել համայնքներին՝ ձմեռվա ամիսներին ճանապարհների սառցակալման դեմ օգտագործելու համար: Մասնագետները բարդ են գնահատել օրգանական միացություններ ունեցող երեք տեսակի աղաջրերի հեռացման հարցը: Բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Էրիկ Գրիգորյանն առաջարկել է վերոհիշյալ աղաջրերի նմուշները ներկայացնել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի քիմիական տեխնոլոգիաների և բնապահպանական ճարտարագիտության ֆակուլտետի քիմիական տեխնոլոգիաների ամբիոն՝ սեղմ ժամկետներում դրանց բաղադրությունը ճշտելու, բնապահպանական առումով անվտանգ նուսրացման և դրա համար անհրաժեշտ ջրաքանակի վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու համար:

Հոկտեմբերի 4-ը կենդանիների պաշտպանության համաշխարհային օրն է.

Հոկտեմբերի 4-ին աշխարհում նշում են կենդանիների պաշտպանության համաշխարհային օրը: Հայաստանի Հանրապետությունը նույնպես ամեն տարի միանում է միջազգային հանրությանը և այս օրը իրականացնում բազմաթիվ միջոցառումներ: Օրվա խորհրդին համահունչ «Նկարվիր կովկասյան ընձառյուծի հետ» ակցիան այսօր բազմաթիվ մարդկանց հնարավորություն է տվել լուսանկարվելու ARLOOPA հավելվածի միջոցով ընձառյուծի եռաչափ անհնացիոն պատկերի համադրմամբ: Նախաձեռնությունը ՀՀ բնապահպանության նախարարությանն էր՝ WWF-Հայաստանի օժանդակությամբ:

Տեղեկանք

1226թ. հոկտեմբերի 4-ին է մահացել սուրբ Ֆրանցիսկո Ասսիզկին՝ »99մեր փոքր եղբայրների՝ գազանների և թռչունների: հովանավորն ու պաշտպանը: Նրա սրտացավ վերաբերմունքը բոլոր կենդանի արարածների նկատմամբ, նրանց ցավը սեփական ցավից ավելի սուր զգալու նրա ունակությունը, նրան դասել են սրբերի շարքին: Սուրբ, ում երկրպագում են ամբողջ աշխարհում: Սուրբ Ֆրանցիսկոսի անվան մրցանակը հանձնվում է բնության պահպանության բնագավառում մեծագույն



արժանիքներ ունենալու համար: Կենդանիների պաշտպանության Համաշխարհային օրը նշելու որոշումը ընդունվել է 1931թ. Ֆլորենցիայում բնության պահպանության կողմնակիցների Միջազգային կոնգրեսի ժամանակ: Այդ օրը շատ երկրների կենդանիների պաշտպանության կազմակերպություններ իրենց պատրաստակամությունը հայտնեցին ամեն տարի նշելու այդ օրը և կազմակերպելու բազմազան զանգվածային միջոցառումներ՝ ուղղված մարդկանց մոտ յուրաքանչյուր կենդանի արարածի նկատմամբ պատասխանատվության զգացման դաստիարակմանը:



Բնապահպանության նախարարի մամուլի խոսնակ Մարինե Կարապետյանը արժանացավ «Ոսկե բանալի» մրցանակին

ղյունավետն ապահովող պատասխանատու, մասնավորապես՝ օգոստոսի 12-ին «Խոսրովի անտառ» պետական արգելիցում հրդեհի բռնկման և հրդեհաշիջման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ սոցիալական ցանցերում օպերատիվ տեղեկատվություն ապահովելու համար, ինչը բարձր էր գնահատվել ՋԼՄ-ների և ոլորտի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից: Հայտնելով իր երախտագիտությունը պատվաբեր մրցանակի արժանացնելու համար՝ Մարինե Կարապետյանը նշել է, որ այն նախարար Արծվիկ Սինասյանի գլխավորությամբ ՀՀ բնապահպանության նախարարության ողջ անձնակազմի աշխատանքի արդյունք է և կոչ է արել բոլորին՝ լինել բնության կողքին և պահպանել այն:

Եթե զինվորի արիությունը երևում է մարտի դաշտում՝ թշնամու դեմ մարտնչելիս, ապա լրագրողի ու լրատվական ծառայության որակը լավագույնս արտահայտվում է պետության և հասարակության կյանքում տեղի ունեցող բարդ իրադարձությունների և դժվարին շրջադարձերի պահերին: Սեպտեմբերի 28-ին, Տեղեկատվության ազատության միջազգային օրվա կապակցությամբ, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը նախաձեռնել էր տեղեկատվության ազատության «Ոսկե բանալի և ժանգոտ կողպեք» մրցանակաբաշխությունը: ՀՀ բնապահպանության նախարարի մամուլի խոսնակ Մարինե Կարապետյանն արժանացել է «Ոսկե բանալի» մրցանակի՝ որպես տեղեկատվության տրամադրումն ամենաարագն ու ար-

«Բնություն» էլեկտրոնային թերթը սիրով միանում է շնորհավորանքներին և մեր գործընկերուհի Մարինե Կարապետյանին մաղթում նոր «սխրանքներ» իր դժվարին մասնագիտության մեջ, քանզի նրա հիանալի աշխատանքի շնորհիվ է նաև, որ մեր թերթը արագ ու որակով իր ընթերցողին է փոխանցում ոլորտի ամենահիատապ իրադարձությունների մասին պատմող լուրերը:

«Սոճուտ» ղեկըրոպարկում բարձրաստիճան հյուրերի մասնակցությամբ տրվեց «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառման մեկնարկը



Սեպտեմբերի 30-ին Ստեփանավանի «Սոճուտ» ղեկըրոպարկում տեղի է ունեցել «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառման բացումը, որին մասնակցում են Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար Պյոտր Սվիտալսկին, ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանը, ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը, «Արգելիցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Լևոն Գաբրիելյանը և մի շարք բարձրաստիճան պայտոնյաններ: Բացման պաշտոնական արարողություն-

նից հետո հյուրերը շրջել են ղեկըրոպարկի տարածքում, ծանոթացել հազվագյուտ ծառատեսակների պահպանման պայմաններին: Միջոցառմանը հաջորդել է էկոլոթթական դասընթաց, որին մասնակցում են Հայաստանի բոլոր մարզերի դպրոցների բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներ: Դասընթացը վարել է «Արգելիցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի գիտության գծով տեղակալ Արթուր Խալաթյանը: Աշակերտներին ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում ղեկըրոպարկերի մշակույթը:

«Կենդանական ափսարհի նկատմամբ վայրագություն ցուցաբերող անձինք խստագույնս դատաստանավության դեմ է ենթարկվեն»:

Բնապահպանության նախարարը՝ սպիտակագլուխ անգղերի որսի մասին

Այս մասին ասաց բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը՝ արձագանքելով «Չետք»-ի դիտարկմանը, թե Կարմիր գրքում գրանցված սպիտակագլուխ անգղերի որսի լուսանկարներ են հայտնվել սոցցանցում և մամուլում: Հիշեցնենք, որ լուսանկարներում պատկերված անձանցից մեկը Շենավանի ՀՀԿ-ական համայնքապետ Արթուր Սկրտչյանն է, որը «Չետք»-ի հետ գրույցում ասել է, թե պարզապես ճանապարհին ընկած կենդանիներ է տեսել և որոշել է լուսանկարվել: «Ոստիկանությունը հրապարակել է գործողությունների վերաբերալ այս պահի դրությամբ առկա տեղեկատվությունը: Լուսանկարների հրապարակումից անմիջապես հետո ոստիկանության հետ համատեղ ձեռնարկվել են գործողություններ, ոստիկանությունը շատ արագ պարզել է, որ պետհամարանիշը խտանված է դեռևս 2013 թվականից, իսկ դա նշանակում է, որ դեպքն առնվազն դրանից հետո չի եղել: Ինչևէ, սա հանցագործություն է բոլոր հատկանիշներով, և նյութերի հավաքագրումից հետո վստահ եմ՝ արժանի պատիժ կլինի», - ասաց



նախարարը: Արծվիկ Մինասյանը տեղեկացրեց, որ նախարարությունը մտադիր է ավելի խստացնել նման դեպքերով քրեական պատասխանատվության համակարգը. «Որովհետև այսօրվա գործող օրենսդրությունն, իմ գնահատմամբ, բավականին մեղմ է նման հանցատեսակների համար, և առհասարակ որսի կանոնների փոփոխություններ ենք մտադիր իրականացնել որսորդական տնտեսությունների համար: Այնպիսի կանոններ, որ ինչպես քաղաքակիրթ երկրներում է՝ ամենախիստ պատասխանատվության ենթարկվեն», - նկատեց նախարարը: Մեր դիտարկմանը, որ ըստ Շենավանի համայնքապետի կենսագրության՝ վերջինս նախկինում ևս սկանդալային պատմությունների մեջ է եղել, անգամ քրեական գործ է հարուցվել իր նկատմամբ, իսկ ըստ իր լուսանկարների՝ որսի սիրահար է, տարօրինակ չէ՞, որ պարզապես ճանապարհին ընկած կենդանիներ է տեսել և որոշել լուսանկարվել, նախարարն ասաց. «Չեն կարող այս պահին նման հարցի պատասխանել, որովհետև կա անմեղության կանխավարկած, նաև իմ իրավասություններից դուրս է: Պետք է հասնենք նրան, որ օրենքի ամբողջ խստությամբ ենթարկվեն պատասխանատվության»:

Սեդա Ղուկասյան



Հարաբերություններն աշխատանքային են. կոնֆլիկտ չկա

«Բնություն» Շաբաթաթերթի հարցերին դասասխանում է բնապահպանության նախարարի խորհրդական Արծրուն Պեղանյանը



-Պարոն Պեղանյան, «Ժողովուրդ» թերթը լուր հրապարակեց այն մասին, որ բնապահպանության նախարարի և նորաստեղծ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի հարաբերությունները լարված են: Որքանով է այդ լուրը համապատասխանում իրականությանը:

-Հարաբերությունները նորմալ են, աշխատանքային: Վերջին անգամ նրանք հանդիպել են երեկ և հարաբերություններում լարվածության որևէ նշույլ չի եղել: Տեսչության պետի հետ ինքս էլ եմ զրուցել, ու եթե նախարարի հետ լարված հարաբերություն ունենար, ապա ինչպես էլ լիներ՝ քիչ-միչ էլ այդ լարվածությունից կփոխանցվեր նախարարի խորհրդականի հետ հարաբերությանը: Մինչդեռ մենք շփվել ենք նախանձելի ջերմ:

-Նշվում էր նաև, որ նախարարը դժգոհ է այդ մարմնում կադրային նշանակումներից և չի կարողանում պայքարել իր ենթակայության տակ գտնվող տեսչական մարմնի ղեկավարի դեմ:

-Դա անտեղյակության ծնունդ լեգենդաստեղծում է: Նախ, ներկայում բնապահպանության նախարարը ս.թ. օգոստոսի 20-ին ստեղծված բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կադրային նշանակումների հարցում գրեթե նույնքան լիազորություն ունի, որքան, ասենք, «Ժողովուրդ» թերթի գլխավոր խմբագիրը: Տեսչական մարմինը չի ենթարկվում նախարարին և նախարարը, ի տիրություն այդ թերթի, «իրավիճակ վերահսկելու» լիազորություն չունի: Եվ ապա՝ տեսչական մարմինը կառավարում է վարչապետի կողմից հաստատված խորհուրդը, որի կազմում բնապահպանության նախարարությունն ունի ընդամենը մեկ ձայն: Այդ նիստերի արձանագրությունները կարող եք մայել՝ այնտեղ տեսչության պետի կադրային նշանակումների հետ կապված որևէ դժգոհություն չի արձանագրվել: Անտեղյակության ծնունդ նման կարգի մեկ այլ լեգենդաստեղծում էլ մեկ օր առաջ էր եղել: Մամուլում տեսակետ էին շրջանառել, թե բնապահպանական պետական տեսչությունը լուծարվել է նախարար Արծվիկ Մինասյանի դիրքերը թուլացնելու նպատակով: Հարցն այն է, որ ՀՀ կառավարությունը տեսչական բարեփոխումների հայեցակարգը հաստատել է 2009 թվականին և ստեղծել տեսչական բարեփոխումների խումբ: Այսինքն, ըստ այդ լուրը շրջանառողի, դեռ 2009-ին ոմանք իմացել են, որ Արծվիկ Մինասյանը 2016-ին նշանակվելու է բնապահպանության նախարար ու նախապես մտածել են, որ կարելի է տեսչություն լուծարելով՝ նրան թուլացնել: Դեմ չէի լինի ինքս էլ այդ կարգի հեռատեսությամբ օժտված լինելուն:

«Բնություն»



Երևանում մեկնարկել է ծառերի սանիտարական էտը, որը նախատեսված է ավարտել մինչև նոյեմբերի 1-ը: Դրանից հետո կսկսվեն աշ-

Լրատվություն | Էկոլոգ

նանային էտի աշխատանքները: Երևանի քաղաքապետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության հաղորդմամբ ծառերի սանիտարական էտի աշխատանքներ շրջանակում կատարվում է չոր և հիվանդ, ինչպես նաև գերաճ ճյուղերի հեռացում: Աշխատանքները կնպաստեն ոչ միայն ծառերի ղեկ-

րատիվ տեսքի ապահովմանը, այլև դրանց կենսունակությանն ու տարբեր տեսակի հիվանդությունների կանխարգելմանը: Սանիտարական էտի աշխատանքները վերահսկվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության, ինչպես նաև բազմաթիվ մասնագետների կողմից:

Նախագիծը՝ Արծրուն Պեղանյանի խմբագիր՝ Սանվել Սկրչյան
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝ 011 818 517